

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԹՈՒՐՔ ԱՇԽԱՐՀԱԳԻՐՆԵՐՈՒ

Պրոֆ. Ն. Ճ. ՍԻՐՈՒՆԻ (Բուխարեստ)

Հայտնի է, որ շարք մը հայ դեմքեր, որոնք հիմնապես կտիրապետեին թուրքերեն լեզվին ու գրականությանը, լրջորեն զբաղվեցան թուրք ժողովրդի պատմությամբ ու գրականությամբ: Օրինակ, Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը XVII դարուն, իսկ հաջորդ դարուն՝ Պաղտասար Դպիրն ու Կեորզ Պալատեցին:

Նոր օրերու մեջ է, որ սկսեր է թուրքերու հետաքրքրությունը հայ աղբյուրներու մասին: Վկա այն քանի մը թարգմանությունները, զոր թուրքեր կատարել տվին ու լույս ընծայեցին: Արևմտահայ կարգ մը բանասերներ, Պոլսո թե սփյուռքի մեջ, վերջին տասնամյակներում արդեն շահագրգռվիլ սկսան այդ աղբյուրներով: Իրավ է, թե թուրք հեղինակները բոլորովին ալ վստահելի չեն իբրև անկողմնակալ աղբյուր, քանի որ թուրք պատմական երկերը իրենց ըստվար մասով հորինված են պաշտոնական ժամանակագիրներու կողմե, որոնց բովանդակ ճիգն եղած է փառքը հյուսել ժամանակակից սուլթանին՝ ամեն ինչ ներկայացնելով իբրև հաղթանակ և սխրագործություն: Ասկե զատ շատերը թուրք պատմաբաններն իրենց ճոռում և ուռուցիկ ոճով ընթերցողը կմոլորեցնեն չափազանցության մեջ, ճշմարտության հաճախ տարտամ մասնիկ մը ձգելով միայն: Եվ սակայն իրենց այդ վիճակին մեջ իսկ թուրք պատմական աղբյուրները ուշագրավ ատաղձ են հայ անցյալը պրպտողներուն համար:

Այնպես որ մեծապես ողջունելի են փորձերը, որոնք Սովետական Հայաստանի մեջ ևս կկատարվին թուրք աղբյուրներու հետազոտման մարզին վրա: Ուսումնասիրությունները, որոնք այդ ուղղությամբ տեղի կունենան և լույս կընծայվին քանի մը տարիի ի վեր՝ հայ պատմությունն ու բանասիրությունը եթե ոչ անակնկալներով, գոնե հիշարժան և երբեմն նույնիսկ շահեկան նորություններով օժտելու բնույթը ունին և Հայաստանի գիտություններու ակադեմիայի արևելագիտական սեկտորի նախաձեռնությամբ հրատարակվող արևելագիտական ժողովածուները մեծապես կսատարեն թուրք աղբյուրներու հետազոտման գործին ալ: Բայց ինչ որ հայ պատմագրության համար թանկագին նպաստ մը կոչված է բերելու՝ հատորներու այն շարքն է, զոր նույն սեկտորը սկսած է լույս ընծայել «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» տիտղոսին տակ՝ Ա. Խ. Սաֆրաստյանի հոգածությամբ: Առաջին լուրջ փորձն էլ աս հայ լեզվին վերածելու ինչ որ թուրք պատմագրությունը արձանագրած է հայ ժողովուրդի և հայկական շրջաններու մեջ, և որքան ալ հաճախ վստահելի և միևնույն չափով կարևոր չըլլան թուրք հեղինակներու ներկայացուցած փաստերը, անոնք, այսուհանգերձ, շատ բան կլուսաբանեն մեզ ցարդ անծանոթ մնացած գեպերու և գեմքերու մասին: Ավելցնենք, որ բռնատիրությունը ջատագովող թուրք պատմագիրներու մեջ այնպիսի դեմքեր ևս կան, որոնք իսկապես թանկագին նյութեր կհայթայթեն մեր պատմության և որոնք չեն կրնար չհրահրել մեր բացառիկ շահագրգռու-

թյունը: Այդ դեմքերեն են, օրինակ, XVII դարու հեղինակներեն երկուրդ՝ Քյաթիր Չելերին և էվլիա Չելերին:

Ա. Սաֆրաստյանի շահեկան մեկ հոդվածը «Արևելագիտական ժողովածու»-ի Բ հատորին մեջ, «XVII դարի թուրքական գիտական մտքի ներկայացուցիչներ Քյաթիր Չելերին և էվլիա Չելերին» խորագրին ներքև¹, մեզ կթելադրեն քանի մը նոթեր տալ ընդգծելու համար այն կարևորությունը, զոր ունին հիշյալ երկու հեղինակները մեր պատմության համար ալ, ինչպես և շահադրգոությունը, զոր հայ բանասիրության մեջ երբեմն արժարժած է Քյաթիր Չելերին, մինչ էվլիա Չելերին նոր օրերու մեջ է միայն, որ առարկա եղած է մեր ալ հետաքրքրության:

Ծշտենը ուրեմն սկիզբեն, թե թյուրիմացություն է կարծել, որ մեզ մոտ միայն չեն է, որ հիշատակած է Քյաթիր Չելերիի մասին, զրելով իր «Հայոց պատմություն» մեջ, թե «հռչակված թուրք հեղինակներից կհիշատակենք այստեղ մեկին, որ շատ բեղմնավոր գրիչ է ունեցել. դա Մուստաֆա իրն-Արդուլ-լահն է, ավելի հայտնի շահի կուլի կամ Քյաթիր Չելերի կեղծանուններով: Նրա բազմաթիվ աշխատությունների մեջ գնահատելի է «Ջիհաննյումա» (Աշխարհի հայելի) անունով ընդարձակ աշխատությունը²:

Թյուրիմացություն՝ որովհետև տվյալներ ունենք, թե «Ջիհաննյումա»-ն առաջին օրեն ծանոթ եղած է հայ բանասիրության, գոնե զայն իրենց ձեռքին տակ ունեցած են հայ հեղինակներն ումանք, եթե ոչ այն շրջանին, երբ դեռ ձեռագիր վիճակի մեջ կգտնվեր ան, զեթ անոր լույս ընծայվելն անմիջապես հետո:

«Քյաթիր Չելերիի չիհաննյուման,—կգրեն Սաֆրաստյան,—հայերեն է թարգմանել Երեմիա Չելերի Քյոմուրճյանը, որը, սակայն, ցավոք սրտի, մինչև օրս չի տպագրվել»³:

Թե երեմիա, XVII դարու հայ նշանավոր մտավորականը, որ հիմնապես հմուտ էր թուրք լեզվին ալ և ծանոթ է հայերենն թուրք լեզվի, ինչպես և թուրքերենն հայ լեզվի վերածած իր աշխատություններով, նույնպես թուրք լեզվով հորինած իր երկերով, որոնք ղժրախտաբար անտիպ կմնան ցարդ, կրնար տեղյակ ըլլալ իր ժամանակակից թուրք կարկառուն գրողին հեղինակությանց, կասկածն դուրս է:

Երեմիա Չելերիի տպագրված և անտիպ երկերուն ցուցակը կազմելու ատեն⁴, որեւէ աղբյուրի մեջ ակնարկություն չգտանք, սակայն, նման թարգմանության մը մասին: Եթե չփոթության մը արդյունք չէ Սաֆրաստյանի հիշատակությունը՝ արժեքավոր թիվ մը կավելցեն Չելերիի գրչի վաստակին մեջ և նոր ապացույց մը կկազմեն անոր գրական մտահոգությանց լայն հորիզոնին

¹ «Արևելագիտական ժողովածու», II, Երևան, 1964, էջ 283—300:

² Ուրախություն իմացանք, որ Ա. Սաֆրաստյանի «Թուրքական աղբյուրներ» Գ հատորը ամբողջությամբ հասկացված է էվլիա Չելերիի «Ուղեգրության» մեջ հայերի, չալաստանի և Անդրկովկասի ժողովուրդներին վերաբերյալ նյութերին:

³ Լևոն, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 101:

⁴ «Արևելագիտական ժողովածու», II, էջ 286:

⁵ Հ. Ռ. Սիրունի. Պոլիս և իր գերը. Դ գլուխ, Տաղնապի դարը, XXI, Մարդ մը որ կփրկե իր դարը. Էջմիածին, 1964, I, էջ 7—16:

մասին: Բաղձալի էր հետևաբար, որ ստուգվիր նման թարգմանության մը պարագան, և մաս կազմեր ան Չելիքիին «Ամբողջական գործ»-ին:

Մեզ ծանոթ հեղինակներեն Հակոբ Նալյան պատրիարքն է եղած, սակայն, որ զբաղած է «Ջիհաննյումա»-ով: Եթե Նալյանի երկերուն բոլորն ալ հավասար արժեքով չեն ներկայանար մեզ, անոնց մեջ կան այնպիսիները, որոնցմէ չի կրնար հրաժարիլ մեր մատենագրությունը: Աստուծոյ մեկն է «Գանձարան ծանուցմանց»-ը, որ ամենէն ուշագրավ երկերէն մեկն է արդարեւ դիտեական պատրիարքին: Ան կպարունակէ «ղորեսին հատորս զայսոսիկ: Յառաջումն՝ ուսուցանէ զաւագ իրիցունս և զամենայն քրիստոնեայս և զբարոգիշս զոր կրթեալսն ի զպրատան, յորում գտանին հարկաւոր ուսանելիք և առնելիք բարոյականք: Յերկրորդումն՝ ուսուցանէ զհամեստ գիտելիս իրքն զհրճուելիս, արդելիչ ծուլութեան, բամբասանաց և զատարկաբանութեան: Յերրորդումն՝ ուսուցանէ զոմանց աշխարհաց պատմութիւնս, իրր հետաքոյգ տիրպիւնիս հայկապէս ներկայացուցանելով: Ի՞չորրորդումն՝ պատմէ զհանդամանս ոմանց զխաւոր քաղաքացն հայոց...»:

Երբ Նալյան իր զրական գործունեություն կսկսեր՝ Քյաթիր Չելեքին ծանոթ անուն մըն էր արդեն: Հունգար զավանափոխ Բրրահիմ Մյուսթեֆերեան 1727-ին թուրք տպագրության հիմը դրած ատեն Կ. Պոլսո մեջ՝ մտահոգությունն ունեցեր էր Քյաթիր Չելեքի երկերուն տպագրության ձեռնարկել առաջին հերթին: Բրրահիմ՝ Քյաթիր Չելեքի երկասիրություններէն «Թուհի-էլ-Քիթաբ ֆի էսֆար-յուլ-բիհար»-ն էր, որ լույս ընծայեց առաջին անգամ 1141-ին (1729), որպէսզի հինգ տարի հետո, 1146-ին (1733), տպագրեւ համալսվոր «Ջիհաննյումա»-ն:

«Գանձարան ծանուցմանց»-ի Գ մասը, որ նոր էջահամարով կսկսի՝ «Յազագս համաոստ պատմութեան Մասանց Աշխարհի և Նշանաւոր կղզեաց» խորագիրը կկրէ (էջ 1—226): Նալյան իր աշխատասիրության սույն մասը շարադրած ատեն ուրիշ աղբյուրներու կարգին, որոնց հիշատակությունը չընէր զԹախտարար, ձեռքի տակ ունեցած է նաև Քյաթիր Չելեքի «Ջիհաննյումա»-ն: Արդարեւ թուրք հեղինակին այս գործը հիշատակված կգտնիք այնտեղ քանիցս: Այսպէս՝ Արևելյան Հնդկաստանի մասին խոսած ատեն (էջ 4), կհիշէ «Ջիհաննյումա»-ի 190 և 200 թղթահամարներէն իր քաղած նոթերը: «Ջիհաննյումա»-ի հիշատակության կհանդիպենք 41 և 42 էջերուն մեջ ևս, ուր կխոսի «Յազագս Չեապունայ կղզեացն, թագաւորութեանցն և բնակչացն»:

Գլուխի մը մեջ, որ նվիրված է «Յազագս Չինացուոյ տիրելութեան և զապտին» (էջ 174), կկարդանք. «Եւ ի ճիհաննյումայն գրեալ է, թէ խաղաւորն յինաց ի իայն ի Գանթայու առնու զՃի (վեց հարյուր հազար) օխայ արծաթ մահսու ի տարին, և ի աղի կէօմրիկէն (մարս) և յեօշիրիցն իփէկի առածն՝ զօրացն մեվաճիպ լինիլ ըէֆիլթ կանէ: Գրեալ է ճիհաննյումայն 100 երեսն, թէ առաւել է փառքն սորա քան զհին հոսմայեցուց կայսերաց»:

«Յազագս Կալիկուտա թագաւորին հնդկաց» գլուխին մեջ կրսվի (էջ 181). «Ճիհաննյումայն 201 երեսն ասէ թէ այս իօլթէս հնդկաց խիստ մամուր է. շատքն խուրմա կուտին. գտանին և այլ մէլովէր և այլն»:

Չելեպիս կղզիին նվիրված հատվածին մեջ ևս (էջ 192) «Ջիհաննյումա»-ի հիշատակությունը կա: Նալյան «Ջիհաննյումա»-են է, որ օտար վկայություններ ևս քաղած է երբեմն. «Ի Տամիանոս սպանիացույ վկայութիւն բերէ ճիհաննյու-

մայն 99 երեսն և ասէ, թէ եւպա անունն՝ իլլաքի օսմանցւոց տիրեալ երկրացն՝ որք յնորոպիայ պատկանի. չիւնքի երջանիկն տէրութեանց՝ Յունաց երկիրն և Մակեդոնիա է, և գլուխն Կոստանդնուպօլիս, և այն է ի ձեռս օսմանցւոց» (էջ 218):

«Յաղագս Սպանիայու մեծին և բնակչացն» խորագրով հատվածին մեջ ուշագրավ են սա բանի մը տողերը. «Սպանիա է բարեզոյն իմն մասն Եւրոպիոյ. որ և ի մէջ աշխարհի համարի որպէս գտնուին թաւուզ խուշիի, որպէս՝ ասի ի «Պատմութիւն Սեփահիլից», շարադրեալ ի Քյաթիպ Չելեպլույ ումիմնէ» (էջ 87):

Ինչպէս կտեսնվի, Նալլան օգտված պետք է ըլլա Քյաթիպ Չելեբիի ուրիշ գործերէն ալ: «Պատմութիւն Սեփահիլից»-ը՝ զոր հականե անվանե կհիշե՝ չենք գտնել Քյաթիբ Չելեբիի երկերուն մեզ հայտնի մատենախոսութեանց մեջ. եթե անոր արդեն ծանոթ երկերէն մեկը չէ այդ գործը, տարբեր տիտղոսով հիշատակված:

Նալլան իր «Գանձարան ծանուցմանց» երկասիրութեան ր գլուխը հորինած ատեն ևս իբր աղբյուր ունեցած է Քյաթիբ Չելեբիի երկասիրութիւնը: Սույն գլուխը (էջ 227—320), որ «Յաղագս փոքրիկ ազգիս հայոց» թէ յորոց սերեցան, զինչ քաջութիւնս արարին, որքան երկիր տիրեցին, և ուր թագաւորեցին» խորագիրը կկրե, չէր կրնար բնականաբար անտեսել երկ մը, որ հազվագյուտ թուրք աղբյուրներէն մեկն էր հայաբնակ շրջաններու մասին:

Նալլան, որ հայ ժողովրդի պատմութեան մասին իր ընդհանուր ակնարկը շարագրած ատեն առավելապէս հորենացին է, որ հիմ ունի իրեն, հետեւյալ սահմանները կուտա շայաստանի. «Սա (Արշակ Մեծն) թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ տալով նմա արքայարան փայթած զՄծրին քաղաք անուանի ի ժամանակի իւրում, և սահման հատանէ նմա զԱսորեստան արեւմտեայ, զՊաղեստին և զԱսիա, և զամենայն Միջերկրեայ և զԻտալիա, ի ծովէն Պոնտոսի մինչև ի Կովկասու ծովն Կասպից, և զԱտրպատական գաւառն Թավրիժու, և ալլ որչափ միտք քո, ասէ, և քաջութիւնդ բազէ, զի սահման քաջաց զէնն իւրեանց, որչափ հատանէ՝ այնչափ ունի (հորենացի, Ա. դպ. է) և թէ զհիւսիս և զարեւմուտս գայ նմա սահմանս:

Նալլան հետո կհարե. «Իսկ Ջիհաննյումայն տաճկաց (41 ֆապլ, 41 երեսն) ցուցանէ և զԹարվեժ և զՍուլթանիէ ի հարաւակոյս, և զԹիֆլիս և զՊիթլիս, և զՄարաշ, զՍիս և զԹարսիս, և զԿիպրոս կղզին լինիլ հայոց, յորոց ըստ բաւականին պէյան լինին սինօրթն հայոց աշխարհին»⁶:

Փոքր շայքի շրջանին համար ևս «Ջիհաննյումա»-ն ուղեցույց է Նալլանի, թեև առանց նույնութեամբ որդեգրելու անոր հաղորդած տեղեկութիւնները, որոնք կերեալ թե երբեմն հարազատորեն տպագրված չեն:

«Արդ Փոքր շայք՝ բաժանի յԱռաջին, յերկրորդ, և յերրորդ: Առաջին շայք՝ ունի զԿեսարիա Մաժակ և զՍերաստիա. և ձգի մինչև յնփրատ գետ. և ունի զԱրգեստ լեւոն ի Կեսարիայ. և զԱլիս գետն Սերաստիոյ: Իսկ երկրորդ շայք՝ յնից կալով հօնիայու և ի հարաւոյ Առաջին շայոց՝ տարածի մինչև ցնփրատ գետ. և ունի մայրաքաղ. զՄելիտինէ՝ որ է Մայաթիա. և զլերինս մեծամեծս 22՝ և զհտ՝ զՄեղոս, և զԿիզնոս:

6 «Գանձարան ծանուցմանց», Ի մաս, էջ 233—234:

Եւ ինչ որ արքայանիստ մայրաքաղաքը Փոքրուն Հայոց՝ Կեսարիա եւ Սեբաստիա յառաջին Հայս, եւ Ատանա. եւ Կիլիկիա: Եւ անուանի քաղաքը ինչ՝ Կոմա-նա, Ուղոկիա. Նիկուպոլիս. Ատալիա. Սելիտինէ. Կոկիսոն. Կոզոնիա. Մարաշ. Սամոստիա. Քեսոն. Պեհեմիս. Անթապ. Սիս. Անուրգաբա. Տարսոն. Լամբոն. Մազն. Մամեստիա. Կորիկոս. եւ այլք: Իսկ Մաճար Իպրահիմ էֆէնտին՝ կամե-լով զգրեալսն այլոց սրբազրիւ, ի Ճիհաննյումայի 410 թղթոյն՝ մեծ կոչէ զՎան. զՆարս եւ զԷրզրում, որ ոչ է այնպէս: Արդ համառօտիւր պարզաբանելի է զվե-րագրեալսն»⁷:

Նալյան շատ հաճախ կրածնովի Քյաթիւր Զելերիի տեսակետներն, մա-նավանդ տեղանուններու ստուգաբանութեան ատեն: Նման տարակարծութիւն մը կտեսնենք Նախիջեանի նկարագրութեան մեջ. «Զկնի համատարած չրհեղե-ղին՝ Նախիկին քաղաքն Հայոց եղև Նախշուան. զի եղև Նախիկին իջևան Նոյնայ եւ որդւոց նորա. եւ կամ Նախիկին ասան եղև շինեալ յորդոցն Նոյի եւ զի անտի իջին ի Ղուխլ ընդ այլ մասունս աշխարհի. եւ անդ ասի լինել զերեզմանն Նոյի: Ըիհաննյումայն 392 երեսն՝ կոչէ զնա Նազշի Ճիհան. ո՛չ գիտելով զստուգաբա-նութիւն Նախշուան անուան. թէ եւ յիրաւի ծագիկն է մամենայն աշխարհի. բայց այլազգիք ըստ լեզուի յիւրեանց ստուգաբանն զբազում բառս. զի բանի մի պէլլեթմիշ արասցին (նմանեցրին). վասն այնորիկ զնախշուանն՝ Նազշի Ճի-հան թապիր են արերա՞: Նալյան տարակարծիք է նաև Մուշի ստուգաբանութեան մասին. «Մուշ քաղաքն է ի գաւառին Տարսոնի՝ մերձ ի գետն Տիգրիս՝ յստո-րոտն Տորոս լերինն ի տուր տեղւոյ. եւ բոլոր գաւառն՝ անուամբ քաղաքին կոչի Մուշ եւ Մշոյ օվայ: Որ փոխանակ Մուշեղէն ասելոյ, համառօտեալ ասի Մուշ. բանզի յաւանդութենէ ունիմք, թէ զայն քաղաքն շինեալ իցէ Մուշեղ քաջն. որդի քաջին Վասակայ հաւորն մեծի Թէոդոսի... Եւ Մուշ ասէ Ճիհաննյումայն 316 երեսն. ի ժամանակս տէրութեանն Հայոց՝ իբր ասել թարգմանի. բայց ստոյգն Մուշեղէն ասել է. եւ կամ վասն թարգմտեան կաղնի ծառոց՝ որ մէջէ ասի՝ յայնմանէ եւս զէպ եկեալ է անունն»⁸:

Նալյան «Ճիհաննյումա»-ի տեղեկութիւններն կհետանա զանազան ա-վանդութեանց վայրը ճշտելու ատեն. «Աստ (յՅղեսիա) ասեն բնակիչքն զԳոռն Բէլա. եւ Արրահամու Նահապետին. Բայց զԲէլ՝ մերն Հայկ սպան յԱրարատեան դաւառի ի հիւսիսակողմն. եւ սատակեալ տեղին Բելայկոչի Բլուր (Խորենացի. Ա. Ժ.): Իսկ զերեզման Նահապետին Արրահամու՝ է ի Քերբոն. վկայեալ յամե-նայն ազգաց. որ թէպէտև Նախիկին կարծեացն ոչ հաւանի Ճիհաննյումայն, բայց եւ երկրորդ կարծիքն անհաստատ է, թէ ի Քիւշէ զիւղ մի Բարիլոնի կան զերեզ-մանք նոցա. 443 երեսն»⁹:

«Աստ (յՅղեսիա) զոյ այն հրաշալի չրհորն յորում ձգեցին զանձեռագործ պատկեր Յիսուսի. եւ այժմ տէրվիշաց թէթկէ է, եւ քրիստոնէից ուխտատեղ. Թէպէտ զայս տալ Ճիհաննյումայն մագամի Նահապետին Արրահամու, որ է ի մէջ միոյ մզկիթի, բայց որպէս ասացաւ, զերեզման նորա է ի Քերբոն»¹⁰:

Երբեմն շփոթութիւններ կնկատն Նալյան «Ճիհաննյումա»-ի մեջ քաղաք-ներու վայրը կամ գետերու ընթացքը արձանագրած ատեն. «Բայց սխալ է որ

7 Նույն տեղում, էջ 264:

8 Նույն տեղում, էջ 270:

9 Նույն տեղում, էջ 273:

10 Նույն տեղում, էջ 280—281:

զՏիգրիսն նփրատ զրէ Ճիճաննիւմայն, թէ ի Տյուսիսոյ դայ. զի այն է Տիգրիս, որ ի Պինկէօլէն սկսանի մօտ էլիփիս զիւղին և է ըրդաց հայլայի ամարանոցն»¹¹։

Նալլան երբեմն չի բաժնեկր Նույն-պես հայթիքի Տաղորդած տեղեկութիւնները զանազան քաղաքներու շինութեան մասին, որպիսին է Վարնո բերդի պարագան. «Բ քաղաքս այս (էրզրում) ոմն աչք ի Հայոց թագաւորեաց և մեռաւ. և յետոյ կինն նորա Իսալի անուն մայր եղև և շինեաց զբերդն. և չիւր պատկերն նկարեաց ի վերայ մէկ դրանն. բայց երազանման է այս զբեալս. Ճիճաննիւմայն 323»¹²։

Երևանի մասին խոսած տեղն՝ Նալլան կ՛հիշէ «Ջիճաննիւմա»-ի հայտնած տեղեկութիւնները առանց համաձայն բլլալու անոնց. «Երևան. որովհետև հաստատանն Քալբէթ և անգը մինչև ի Սուլթանիէ Հայոց աշխարհք էին, իսկ ի Քալբէթու յարեմուտս էր Երևան ի մէջ սահմանացն Արարատեան աշխարհին, որեմն ո՛վ կարէ երկրայել, թէ Երևան ոչ իցէ քաղաք հայոց, կամ յԱրամայ շինեալ. զոր Ճիճաննիւմայն 391 երևան՝ զնա ասէ յորպիսցն Յարեթի Իսկ պարսկերն ոչ են Յարեթեանք, այլ ելիմացիք յորդոցն Սեմայ սերեալք ի յՈւմմալ Իսմէլ Իսին Եաֆէթ իսմի իլէ քէսմի՛, օլումմի՛ տիր. Քուֆանտան ցաղ օլումմի՛ տիր. իսկ (բաս) ծննդոց (ժ. 22) Նլամ էր որդի Սեմայ Իսմի ոչ շինեցաւ յՆլամայ, զոր Արան կոչին, այլ յԱրամայ մերմէ. զի այլազգիք շատ բառի ետե՛ որ աս վերջաւորի՝ վասն համեստացոյցանելոյ ան վանկիւ վերջաւորին. որպես և գետամն Ատէմ, կամ զՄարիամն՝ Մէլլիմ, և զՍիամն հնդկաց Սիան։ Իսկ ի տուեալ նշանացն ետրենացվոյն (Բ պր., էջ 41.) Ծրուանդաշատն է Երևան, որ թարգմանի Երուանդուպօլիս։

Ջնկի-չայն (որ է Հրազդան գետն) առ ոտիւր նորա կանցանէ, ասէ Ճիճաննիւմայն՝ յարեմտից կողմանէ. սակայն ի միջոյ հիւսիսոյ, զի Սեանու Արճէ տէթիս ասած ծովէն ի հիւսիսոյ Երևանու դայ Ջնկի-չայն՝ որոյ կից յարեալք անկանի քաղաքն. նաև յԱրազ գետոյն մինչև ի Կուր գետն զնէ զսահմանն Երևանայ որեմն և Երասխ լինի ի մէջ սահմանաց Երևանայ»¹³։

Նալլան շատ հաճախ ալ առանց զիտոյցութեան կ՛հիշատակէ «Ջիճաննիւմա»-ի տված տեղեկութիւնները զանազան վայրերու մասին. «Ճիճաննիւմայն ես վկայէ թէ երկու դաւառք են Մարաշ և Ատանա ի Փորք Հայք, զորս ոմանք Հայոց տան. 598 թղթահամարն» (էջ 281)։ Եվ կամ՝ «Աստ (ի Մէլիտիէն) լինի զեղեցիկ հաղթու խնձորներ. բայց ի վերայ մէկ թղթի մի գինչ և կամին զրեն. և երբ խնձորն կանաչանայ և սպիտակի, կպցնեն ի վերայ խնձորին զթուղթն. այն որ յարեու զէմն է կարմրի կպցուցաց զիւրն զինչ և իցէ. և մէկ քանի աւուր յետե կարմրի. և թղթի տակն ձերմակ և կամ կտնաչ մնայ. Ճիճաննիւմայն 600 թղթահամարն։ Աստուտ տղէտրն խարին իւր հրաշք կարծելով ի րնէ եղեալ։ Քասիպ տաճիկըն Մալաթիոյ՝ շատ միամիտ բրիստոնեայք պատրին այս կերպով» (էջ 283)։ «Փայտն և պարտէզըն (Սուլթանիէի) հետի են ի քաղաքէն մէկ խոնախ. բայց ջուրն և օդն քաղցր և առողջարար է. երեք շորս կանգուն փորած տեղէն ջուր ելանէ. իսկ մրդեղէնքն ի շրջակայից գան. շարաբի եղեղնուտ տեղ է. զկնի շինմանն՝ յամէն ազդէ և կրօնից եկեալ աստ բնակեցան։ Զայս

¹¹ Նույն տեղում, էջ 274։

¹² Նույն տեղում, էջ 275։

¹³ Նույն տեղում, էջ 292—293։

նայլանի թարգմանությունը կրողականա 22 մասերե՝ որոնք են. 1. Յաղագս Եափօն կամ Չեափօնի կղզւոյն. 2. Յաղագս Քինայոյ. 3. Յաղագս ցամաքային կղզիացն Չինաց և Հնդկաց Արեւելցւոց. 4. Յաղագս Սումատրայ մեծի կղզւոյն. 5. Յաղագս Չինացւոց աշխարհին. 6. Յաղագս հաթայի կլիմային, մասինն Ասիո. 7. Յաղագս Հնդկաց հրկրին. 8. Յաղագս Սինո կոչեցեալ իզլիմի Հնդկաց աշխարհին. 9. Յաղագս Քիչմիրոյ մէմլէրէթին. 10. Յաղագս Սաճիսթանոյ և Սիսիսթանոյ հրկրացն պարսկաց. 11. Յաղագս Քիրմանայ և Հիւրմիդի և Լաւրիւրմի. 12. Յաղագս պարսից կլիմային, որ է Ասիոյ անուանի հրկրին. 13. Յաղագս հօրասանայ և Գաճսթանայ. 14. Յաղագս թուրքիսթանայ և Տէշթի. 15. Յաղագս Ատրպատական աշխարհին Քաւրիմոյ. 16. Յաղագս Աղան և Մուղան և Շիրվանայ գաւառացն. 17. Յաղագս Հայաստանեայց աշխարհին և բոլոր գաւառացն. 18. Յաղագս Արղրումայ Կարնոյ բաղարին և գաւառին հրկրոյ մասին Հայոց աշխարհին. 19. Յաղագս Միջագետացն Ասորոց, այսինքն հրկրին. որ ի մէջ Եփրատայ և Տիգրիսի գետացն. 20. Յաղագս Արադի Արեւիկին. 21. Յաղագս ցամաք կղզւոյ Սարայի հրջանիկ Արարիոյ. 22. Յաղագս Շամայ, այսինքն Դամասկոսի կլիմային. 23 Յաղագս Փորր Ասիոյ, որ կոչի Անաթոլի: Եւ յետոյ՝ Յաղագս գտման նոր աշխարհին, որ ասի Արեւմտեան և կամ նոր Հնդկասթան:

Նայլանի ձեռագրին ժն (էջ 179—190), ժՁ (էջ 191—198), ժԷ (էջ 198—206), ժԸ (էջ 207—219) և ԻԱ (էջ 254—304) մասերուն մեջ է, որ կերևան առաւելնապէս Քյաթիր Չելերիի նոթերը հայկական շրջաններու մասին: Այսպէս՝ նոթեր կան ի մասին Իրևան բաղարին (էջ 179), Արղայ լեռան, Կէնճէ բաղարին Երևանա, Բերտի բաղարին, Նախշուանայ (էջ 180), Մուղան բաղարին, Շիրուան բաղարին ու գաւառին, Շամախի (էջ 181), Ձինկու գետոյն Երևանայ (էջ 184), Կարսայ (էջ 188), Կաղզմանայ (էջ 189), Արտանուճ բերդին (էջ 190), Վանայ բաղարին (էջ 192), Արճիշու բաղարին, Վանայ ծովուն, հլաթայ բաղարին, Սիպան լեռին (էջ 193), Բաղէշ բաղարին (էջ 194), Մշոյ բաղարին (էջ 195), Պուլանուխայ լճին, Ներքովթայ լեռին (էջ 196), հօշապայ գաւառին (էջ 197), հիդանայ բերդին (էջ 198), Արղրումայ բաղարին (էջ 199), Կամախայ, Արդնկեանայ, Բայրերդի (էջ 200), Գարէհիսարու Շարդի, Բասէնու (էջ 201), Բսպլըու, հնուսայ, Մայադկերտու (էջ 202), Պայազիտու բերդին, Մուրատ գետոյն (էջ 203), Տիգրանակերտու կլիմային (էջ 210), հարրերդոյ (էջ 213), Բումդալէի՝ ալսինքն Հոսմկլայի (էջ 275), Երմանիկոյ (էջ 275—276), Ալպրսթանու և Զամանթիոյ և Պէհլանու (էջ 276), Գարսայ փորուն Հայոց, Անթէպու, Մալաթիո (էջ 277), Ատանայի (էջ 278), Սսայ գաւառին (էջ 279), Բարձրաբերդին Քարսսայ (էջ 280), Սերաստիոյ (էջ 298), Քոդաթու (էջ 299), Արապկերի, Ակնայ, Տիւրիկու (էջ 300):

2. Դուկաս Ինճիճյան ևս ձեռքին տակ ունեցած է Քյաթիր Չելերին, շարադրելու առթիւ Հայաստանի՝, եւրոպական թուրքին¹⁸ և Կ. Պոլսոյ¹⁹ նվիրած նրեր հատորները «Աշխարհադրութիւն շորից մասանց աշխարհի» շարքին մեջ. որուն մնացյալ 8 հատորները հորինած է Ստեփաննոս Ելուվեր Աղոնց:

¹⁷ Աշխարհադրութիւն շորից մասանց աշխարհի», մասն Ա, Ասիա. հատոր Ա. Հայաստան, Վենետիկ. 1806:

¹⁸ Նույն տեղում, մասն Բ, եւրոպիա, հատ. Զ, Օսմանեան տերութիւն, Վենետիկ, 1804:

¹⁹ Նույն տեղում, մասն Բ, եւրոպիա, հատ. Ե, Թուրքի, Վենետիկ, 1804:

Նայյանեն հետո, որ հայոց անցյալին մասին մեզ հասած տեղեկությունները համադրելու առաջին փորձն բրած էր XVIII դարու կեսերուն՝ անոնց կցելով աշխարհագրական ծանոթություններ ալ, իրեն մատչելի հղած աղբյուրներու թող տված չափով, Ինճիճյան այն գիտնականն եղավ, որ հետազոտեց ու նկարագրեց հայոց աշխարհը այնպես, ինչպես որ ան կներկայանար անցյալ դարու սկզբին:

Հետամուտ ավելի ճշգրիտ ներկայացնելու օսմանյան կայսրությունը իր տեղադրության և վարչական բաժանումներուն մեջ, Ինճիճյան պատմական ծանոթություններ բաղելով հանդերձ ինչ-ինչ օտար պատմիչներն և աշխարհագիրներն, ինչպես Կուլիկովոս Սանսոն, Պիֆֆին, Լանկլի, Մարտինիէ, Պիշենկ և այլն, կմերժեր անոնց կատարած բաժանումները և կբսեր. «Ըստ այսմ են և բաժանումը այլոց աշխարհագրաց և աշխարհացոցից՝ որք զրեթէ սակաւօր տարբերին ի միմեանց, կամ ի կարգին և կամ ի թիւն. յորմէ մարթ է իմանալ դետապ ծանօթութիւնն զոր ունին վասն օսմանեան սահմանաց, և զշփոթութիւնն զոր ի մէջ բերին նոյն բաժանումը. զի ի նոսա են դաւառք ինչ նորք, դաւառք ինչը՝ որ ի զործ ածէին ի միջին դարու (որպէս ասեն), այսինքն ի ժամանակս բրիտոնեայ կայսերաց մանաւանդ թէ ի ժամանակս վերջնալուսնոցին. և են դաւառք ինչ՝ որ ի զործ ածէին ի հին դարու, այսինքն ի ժամանակս հեթանոսութեան յունաց զլիտվին անծանօթ օսմանեանց: Եւ այսպէս, յերից զանազան ժամանակաց և յերից բաժանմանց՝ իբր ինքնահնար մի բաժանումն հաւաքեալ յարմարեալ է վասն յառաջիկայ ժամանակիս յորում տիրեն օսմանեանք. այլ այսպիսի բաժանումն չիք ո՛չ այժմ, և ո՛չ յառաջ»²⁰:

Իր հետազոտությունները ավելի լրիվ ընելու համար Ինճիճյան առաջին հերթին պիտի դիմեր բնականաբար թուրք աղբյուրներուն: Արդ, Պոլսո նկարագրության և եվրոպական Թուրքիո նվիրված հատորներուն մեջ՝ Ինճիճյան օգտված է Քյաթիր Չելեբիի ձեռագիր մեկ «Ճիհաննյումա»-են, որուն մասին տեղեկություններ չի տար մեզ դժբախտաբար, մինչ Հայաստանի նվիրած հատորին խմբագրության ատեն Քյաթիր Չելեբիի տպագրված երկն է, որ ունեցած է ձեռքին տակ, ինչպես ինքն իսկ կհիշատակե Պոլսո նկարագրության ձեռնված հատորին վերջը «Բան առ Վերծանօղս» խորագրով հատվածի մը մեջ. «Գրագում ուրեք յիշել ունեմք զտաճկական մատեան ձեռագիր ճիհաննյումայն. որ է ստորագրութիւն միայն Ռումելի մասին, այլ ի տպագրեալ ճիհաննյումայէն յորում Ասիա և եթ ստորագրի»²¹:

Այնուամենայնիվ Ինճիճյան Թուրքիո վարչական բաժանումներուն նկարագրության առթիվ չի հետևիր «Ճիհաննյումա»-ի, որ իրմ մեկուկես դար առաջ հորինված է, այլ առավելապես պաշտոնական վերջին ստորաբաժանումներուն, զորս գտած է ճարքունի զիվանադարին» մոտ, թեև այս վերջինն ալ կշեղի երբեմն, երբ իր անձնական շետազոտությունները նոր փոփոխություններ ցույց կուտան:

Պետք է հիշենք այստեղ, որ Քյաթիր Չելեբին առաջ ալ գտնված են թուրք հեղինակներ, որոնք Թուրքիո վարչական բաժանումները արձանագրած են: Ատոնցմէ մեկն է, օրինակ, Ալի էֆենդին, որմն օգտված է Քյաթիր Չելեբի

²⁰ Նույն տեղում, էջ 101:

²¹ Նույն տեղում, էջ 198:

ևս, ինչպես ինքն իսկ կ՛հիշէ՝ Ալի Լֆենդիի «Կապանին րեսալիսի»-ն, որ 1015 (1609)-ին հորինված, 1280-ին (1863—1864) է միայն Կ. Պոլսո մեջ լույս տեսած, հետևյալ 14 դավառները կնշանակէ Վանի էյալեթին մեջ.

1. Վան, 2. Աղիլքեւիւղ, 3. էրջիշ, 4. Մուշ, 5. Փարգիբի, 6. Գարդառ, Մոկսով մեկտեղ, 7. Քեսանի, 8. Իսփայիրտ, 9. Աղաբիս, 10. էրրաղ այսինքն Կոթուր, 11. Բայազիդի բերդ, Այաշկերտով մեկտեղ, 12. Բերդա, 13. Օվաջրը. 14. Պիտլիս:

«Ի ճիճանն յումային» կրսէ Ինճիճյան, ժԴ դնին սանճաղը Վանա.

ա. Վան, բ. Ատիլճեւիւղ, գ. Արճեշ, դ. Մուշ, ե. Բերկրի, զ. Քյարքյար, է. Քիսանի, բ. Ասիյապիրտ, թ. Աղաբիս, ժ. Քուրդըն որը կոչին Պենի Գատուտե, ժա. Բերդն Պայազիտի, ժբ. Պերտե, ժգ. Յուվլճիբ²²:

Վանի դավառները, դարձյալ ըստ Ինճիճյանի, հետևյալ ձևով կներկայանային արքունի դիվանադարի մոտ.

1. Վան, 2. Ատիլճեւիւղ, որ է Այճաւաղ՝ այն ինքն է Արժկէ, 3. Պիտլիս, 4. Խիզան, 5. Շիրվե, 6. Ասիյապիրտ, 7. Քերին, 8. Զերդա որ է Զրրդան, 9. Քյարքյար, 10. Աղաբիս, 11. էրճիշ որ է Արճեշ, 12. Մուշ, 13. Պարկիբի որ է Բերկրի, 14. Մուրս որ է Մոկս, 15. Շատախ, 16. Խոշապ որ կոչի նաև Մահմուտի, 17. Հարյարի²³:

Ինճիճյան կրսէ, թէ Թուրքիո դավառները (լիվա կամ սաեմազ) և թեմերը (զաալլը) դասակարգած ատեն պիտի հետեի արքունի դիվանադարին «առնթեթ» գնելով իւրաքանչիւրոց և զ՛ին անուանս՝ զորս հնար եղաւ դտանել. նաև ստորագրելով զայնոսիկ հին և նոր նահանգսն, յորս բաժանեն այժմեան աշխարհագիրը և աշխարհացոյցը հորոպեանց զԹումիլին, որպէսզի ընթերցողը մի ամենեկն անձանթ ըրցին յաշխարհացոյցս նոցա՝ որ սփռեալ է ի ձեռս ամենեկունս²⁴:

Ինճիճյանի հիմնական մտահոգութիւնն ըլլալով ներկայացնել իրեն նյութ առած երեք շրջանները (Հայաստան, Կ. Պոլիս և Եվրոպական Թուրքիա) ինչպես որ անոնք կներկայանային XVII դարու վերջերւ, ավելի ճիշտ սուլթան Համիդ Ա-ի (1774—1789) շրջանին, կրսէ, թէ զրբին լույս տեսած օրերուն, այն է 15—20 տարի հետո՝ «մարթ է բազմաց տեղեաց և իրաց փոփոխեալ և այլայլեալ լինել, որը ոչ են այժմ ըստ զրեւոցս»²⁵:

Վանի էյալեթին վարչական բաժանումը արքունի դիվանադարին ներկայացուցած ցուցակէն հետո ալ պետք է նոր փոփոխության մը ենթարկված ըլլա Ինճիճյանի Աշխարհագրութիւնը՝ շարադրված ատեն՝ «Այլ այժմ,— կգրէ Ինճիճյան,— այսորիկ դնին գաւառը Վանա.

ա. Վան, բ. Խոշապ, գ. Ընուամերկ, դ. Խլաթ, ե. Արժկէ, զ. Արճեշ, է. Բերկրի, բ. Բաղէշ կամ Պիտլիս, թ. Խիզան, ժ. Զրրթիսան, ժա. Մուշ»²⁶:

Եվրոպական Թուրքիան և սամանյան մայրաքաղաքը նկարագրած ատեն՝ Ինճիճյան կ՛հիշէ միայն Քյաթիբ Զիլերիի երկը:

²² Նույն տեղում, Հայաստան, էջ 137:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, Եւրոպիա, հատ. Ե, էջ 102:

²⁵ Նույն տեղում, էջ 198:

²⁶ Նույն տեղում:

Սոփիայի բնակարանային կառավարման մեջ՝ Մարիցա գետին մասին խոսած ատեն կրսե օրինակ. «Ի նախնեաց Պրինիոս և յարդեաց ձեռագիր ճիշաննիւմայն ի վերին կողմանս գետոյս դնեն ելանել աւաղ ոսկւոյ»²⁷։ Դարձյալ խոսելով՝ Վիթոլ լերան շրջակա ջրամուկներուն մասին, Ինճիճյան կգրե. «Եւ անդէն ասէ ձեռագիր ճիշաննիւմայն հրաշալիք ոմանք, որոնց մին է քառակուսի աւաղան ի դեղին վիմէ լի ջրով, ուստի որչափ և առնուցուն քուր՝ իսկ և իսկ լցեալ լինի, թէպէտ և չունի ասեն ձերպ ինչ»²⁸։

Ինճիճյան «ձեռագիր ճիշաննիւմայն» կհիշէ նաև ուրիշ բաղմամբով առիթներով. ինչպես Ֆիլիպի²⁹, Գյումուշի³⁰, Թիմուրթաշի³¹, Մանասթրի³², Փերիթի³³, Էրդենի³⁴, Սելանիկի³⁵ մասին խոսած ատեն։

Ինճիճյան Պոլսո գանազան մզկիթներուն նվիրած գլուխին մեջ խոսելով Այա-Սոփիայի մզկիթին մասին, կրսե, թե Լերիմնի հունական մայր-տաճարը եղերող շորս միևարարները չինված են Ֆաթիհի, սուլթան Սելիմ Բ-ի և սուլթան Մուրադ Դ-ի կողմէ, և կավելցեն. «Ըստ այսմ դնէ ձեռագիր ճիշաննիւմայն. բայց պատմագիրք օսմանեանց գերկուս մինարէս չինեալ ասեն ի Ֆաթիհէն, իսկ գերկուս ի Սելիմէն»³⁶։

Հայաստանին նվիրած իր հատորին մեջ է առավելապես, որ Ինճիճյան օգտված է Քյաթիր Չելերի³⁷ Բայց այստեղ արդեն «ձեռագիր ճիշաննիւմայն» չէ, ինչպես ըսինք, այլ 1733-ին տպագրվածս։ Քյաթիր Չելերի³⁷ օգտված աւտեն՝ Ինճիճյան, սակայն, կուրորեն տեղեկություններ չէ քաղած անկե։

Խոսելով Եփրատի մեջ հոսող գետերու մասին, Ինճիճյան կհիշէ Կորզվաց լեռնէն այնտեղ հոսող վտակ մը, ըսելով որ «բոսս ասելոյ Քեաթիպ Չելիպիին ի ճիշաննիւմային, գայս վտակ կոչեն Չարմուր, որ և ի յանցս ինչ ի շորս բաժանի. գրէ և այլուր թէ ի դաշտն Պայէզիտոյ ընդ երկիր սուգեալ յետ չորեքմայն միջոցի անդրէն իվեր յառնէ»³⁸։

Միշտ խոսելով Եփրատ հոսող ջրերուն մասին, Ինճիճյան կրսե, թե «Քեաթիպ Չելիպի Միւրատ կոչէ զվտակն բղխեալ յԱյատաղին Տիատինոյ. երկուրդ Միւրատ կոչէ զբղխեալն ի Պինկէօլ. և Ֆիւրաք կոչէ զբղխեալն յԷրզրոմ. զորոյ գակն դնէ ի Գալիդուլայ յանձանօթ լեռն ի Շողանի կամ ըստ նորա ի Շուղնի ձորն, որ ընդհակառակն բղխէ հեռի ի ձորոյ աստի։ Զբղխեալն ի Պինկէօլ (որ որպէս ասացաք է գիտակ որ ի Շողանի ձոր խառնի ի գետակն Էրզրոմումայ և նովաւ հանդերձ սկզբնաւորէ զԵփրատ)։ սա իջուցանէ ի վտակն Տիատինոյ, և նովաւ հանդերձ անցուցանէ գայն ընդ Մուշ, ընդ Կինճ (ընդ որ ոչ անցանէ), ընդ Ճապղջուր, ընդ Բալու և ի Բիշվանի միացուցանէ ընդ վտակին

27. Նույն տեղում, Եփրատի, հատ. ա, Վենետիկ, 1804, էջ 4։

28. Նույն տեղում, էջ 6։

29. Նույն տեղում, էջ 8։

30. Նույն տեղում, էջ 11։

31. Նույն տեղում, էջ 13։

32. Նույն տեղում, էջ 14։

33. Նույն տեղում, էջ 16։

34. Նույն տեղում, էջ 18։

35. Նույն տեղում, էջ 33։

36. Նույն տեղում, Եփրատի, Ե հատ., էջ 146։

37. Նույն տեղում, Ասիա, հատ. Ա, Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 16։

էրզիտումայ, որ է Ֆիրաթ: Ի հասանելին ի դաշտն Մշոյ՝ յինրն բնդունի ասէ զՔարասուն, ուր ընդ համօրէն Մուշ շիր գետակ ինչ Քարասու կոչեցեալ, այլ երկորին Քարասու են այլուր որպէս զընցար ի վերոյն³⁸:

Ինճիճյան կմատնանչն հետո, որ Քյաթիր Զելերիի սույն շփոթություններն ազգված են օտար աշխարհագիրներ ալ. «Առաւել ևս շփոթեն զընթացս գետակին Տիատինոյ այն աշխարհագիրը ևւրոպացւոց՝ որք առին ի նմանէ, զՉամուրն տեղւոյ անուն կարծելով և զրդիւեայն ի Պինկէօլ՝ նոյն դնելով ընդ ջրոյն Մելագկերտի, որպիսի ոչ զնէ Քեաթիպ Զէլպին»³⁹:

Իր ձևորին տակ ունենալով հանդերձ Քյաթիր Զելերին, Ինճիճյան նույնությամբ չէ որդեգրած հետազային ևս անոր տվյալները, այլ ջանացած է ճրչտել շփոթությունները, որոնց հանդիպած է Քյաթիր Զելերիի մոտ:

Ինճիճյան Քյաթիր Զելերիի «Զիհաննյումա»-ն նյութեր կրաղն նաև երբ Հայաստանի աշխարհագրության նվիրած իր հատորին մեջ կիսոսի զանազան հաւարնակ և այլ վայրերու մասին, որպեսին են Սեան (էջ 29), Խնուս (էջ 81), Սպեր (էջ 94), Երզնկա (էջ 98), Քդի (էջ 106), Նփրկերտ (էջ 222), Մարանդ (էջ 252), Վան (էջ 135 և 140), Մուգան (էջ 274), Սերաստիա (էջ 274), Կեսարիա (էջ 313), Մալաթիա (էջ 321), Մծրին (էջ 344), Մամնդավ (էջ 378), Մարաղա (էջ 412), Շիրվան (էջ 413), Տերպենտ (էջ 417), Լադիսթան (էջ 379—380), Պոզոզ (էջ 296), Պեհեսնի (էջ 325), Պիլգան (էջ 272), Սինճար (էջ 345), Եայլա Մեսճիտի (էջ 381), Քյուշթասեֆի (էջ 416):

Ավելցնենք, որ Ինճիճյան օգտված է թուրք ուրիշ աղբյուրներն ալ: Ազրիանապոլսո նկարագրության առթիվ, օրինակ, օգտված է Մյուստերրիս Ապսյուո-ոհհմանն. «Գոյով սորա Լտրէնէցի,—կը գրէ Ինճիճյան,—ի հիճ [րեթի] 1045 (- 1635) արար առանձին գիրս ստորագրութեան գիրոյ բաղարէն, յորմէ հանեալ է ըստ մեծի մասին և այս մեր ստորագրութիւն»⁴⁰:

Քյաթիր Զելերին պետք է ծանոթ եղած ըլլա XVII և XVIII դարերու ուրիշ հայ մտավորականներուն ալ, մանավանդ անոնց, որոնք որեւէ չափով կհետաքրքրուին թուրք լեզվով ու թուրք գրականությամբ: Եւ զույգն չէր այդպիսիներուն թիւը. թուրք լեզվով երկեր հորինող հայեր հաճախ կհայտնվէին, նույնիսկ հայ հոգևորականության շարքերուն մեջ:

Կարծես հիշել պարագան Հովհաննէս Էպ. Կեսարացիի, Երուսաղեմի միաբանության կարկառուն անդամներն մին⁴¹, որ 1765-ին թուրքերենն հայերենի թարգմանած է «Պատմութիւն գիտոյ Ամերիկայի» գիրքը, և որ նույն տարին օրվան պատրիարք Կարապետ Գանձակեցիի (1761—1768) խնդրանքով հայնցի տառերով գրի առած է Քյաթիր Զելերիի «Օսմանյան թաղավորներու պատմությունը»:

Թե՛ նալյան, թե՛ Ինճիճյան անծանոթ էին հայ շրջաններու մասին ևս խոսող այն արժեքավոր աղբյուրին, որ էվլիա Զելերիի «Ուղեգրություն» է (Սեյահաթնամե) և որուն ձևագիրը, ան ալ զեռ մասամբ, անցյալ դարու կե-

³⁸ «Բ գաւառին էրզիտումայ» (նույն տեղում, էջ 17) և ի «Մալաթիոյ փոքուն հայոց» (նույն տեղում, էջ 18):

³⁹ Նույն տեղում, էջ 18:

⁴⁰ Նույն տեղում, Երուսաղեմ, հատ. 2, էջ 21:

⁴¹ Ա. Գ. Կ. Ե. Ն. Ս. Միարան և այլքեր, էջ 381:

ւերուն մոտ էր միայն, որ հայտնվեցավ: Առաջին անգամ Համմերն⁴² էր, որ հայտնագործեց այդ ձեռագրին առաջին երկու հատորները, իր պատմության մեջ ներկայացնելով համբավաւոր թուրք ուղեգրին մասին կենսագրական տեղեկություններ և ծանոթացնելով անոր ուղեգրության իրեն ծանոթ մասերը. իսկ ընչ հետո լույս տեսնելով երկու այդ առաջին հատորները անգլերեն թարգմանություն⁴³: Թուրքերը 1840-ին էր միայն, որ լուր ունեցան էվլիա Չելերիի մասին, և ան ալ առաջին հատորեն կատարված ինչ-ինչ քաղվածքներով, որոնք լույս տեսան Պոլսո մեջ 1840—1863 տարիներուն: Հազիվ 1896—1900 թվականներուն է, որ տպվեցան Պոլսո մեջ էվլիա Չելերիի ուղեգրության վեց հատորները՝ համիդյան զրաբենության պայմաններուն մեջ, մնացյալ չորս հատորները տպագրվեցին 1926 և 1938 տարիներու միջև:

Այս պայմաններուն տակ հայ բանասիրությունը նոր օրերու մեջ էր միայն, որ պիտի տեղեկանար էվլիա Չելերիի տված ծանոթությանց հայկական շրջաններու մասին, շնորհիվ զանազան հոգվածներու, որոնք լույս տեսան հայ պարբերական մամուլի մեջ՝ Սազրգի, Հ. Քյուրդյանի, Ա. Սաֆրաստյանի և ուրիշներու կողմէն, սպասելով, որ շուտով ողջունենք մեզ շահագրգռող շրջաններու վերաբերյալ հատվածներուն լրիվ թարգմանությունը Սաֆրաստյանի ձեռքով կատարված:

«Ջիհաննյումա»-ի մեկ ձեռագիրը հայտնաբերեցինք Ռումանական ակադեմիայի մատենադարանին ձեռագիրներու բաժնին մեջ⁴⁴: Սույն ձեռագիրը, որուն Ռումանիա հասնելուն պարագաները հիշատակված չեն, XVII դարու գրչությանն կթվի ըլլալ, հավանաբար ընդօրինակված հեղինակին օրով, եթե ոչ անոր իսկ ձեռքով գրված: Բազմաթիվ բարտեղները, որոնցմով օժտված է ձեռագիրը, դժված են խնամքով և դունավոր են:

Ստորև հոգվածին կկցենք Ռումանական ակադեմիայի ձեռագրին պարունակած բարտեղներեն չորսը, որոնք հետևյալ շրջանները կներկայացնեն.

1. Էվլիզմի Ֆարս (Պարսկաստան)⁴⁵.
2. Մեմլեքեթի Շիրվան (երկիր Շիրվանա)⁴⁶.
3. Վանա լիճը իր շրջականներով⁴⁷:
4. Մեմլեքեթի Գյուրջիստան (երկիր Վրաստանի)⁴⁸:

⁴² I. von Hammer, Geschichte des osmanischen Reiches, III, էջ 459—479:

⁴³ „Narrative of Travels in Europa, Asia and Africa by Evliya Efendi“, London, 1840—1850, I—II.

⁴⁴ Biblioteca Academiei RPR, Manus orientale, № 265.

⁴⁵ Թուրք 148, էջ 297:

⁴⁶ Թուրք 211, էջ 425:

⁴⁷ Թուրք 221, էջ 445:

⁴⁸ Թուրք 216, էջ 434:




Գծ. I. Գարսկաստան:



Գծ. II. Կասպից ծովը և Շիրվանա երկիրը:



Գծ. III. Վանա լիճը և նրա շրջակայքը:



ՊՃ. 11. Հայաստան:

АРМЕНИЯ В ТРУДАХ ТУРЕЦКИХ ГЕОГРАФОВ

Проф. А. Ч. СИРУНИ (Бухарест)

(Р е з ю м е)

В статье показывается, что с XVIII в. армянские ученые начинают интересоваться трудами турецких авторов и географов, содержащими различные данные и сведения о географии Армении. Так, Акоп Налян при написании третьей книги своей работы «Գանձարան ծանուցման» («Сокровищница сведений») в числе других источников широко использовал также труд турецкого автора XVII в. Кятиба Челеби «Джиханнума» («Зеркало мира»), представляющий собой один из редких турецких источников о территориях, населенных армянами. А. Налян внес ряд коррективов в этимологию и расположение некоторых населенных пунктов, о которых имеются сведения в труде указанного турецкого автора. Кроме того, Налян перевел «Джиханнума» на армянский язык (перевод, однако, остался неопубликованным). Другой армянский автор, Гукас Пиджиджян, также имел под рукой труд Кятиба Челеби, когда излагал те главы своего сочинения «География четырех частей света», которые относятся к Армении, европейской Турции и Константинополю.

Ценные сведения об Армении содержит также «Сейятнамс» («Տղայրն Քրտի») Эвлия Челеби. Этим трудом армянские ученые интересовались лишь недавно.

К статье приложены четыре карты из хранящегося в Румынской академии наук рукописного экземпляра книги «Джиханнума», представляющие Персию, Ширван, Грузию и озеро Ван с окрестностями.